ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-9-2

ք. Երևան «01» օգոստոսի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և ԱՀ ԱՆ ՊՀՀՏ «Հակահամաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Օ. Գրիգորյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ***առավելագույն գինը կազմում է 7,790,000 (յոթ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:*** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 20.12.2018թ.ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը՝ 2018թ. հունվարի 1-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ, ընդ որում պայմանագրի կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011006300
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ԱՀ ԱՆ ՊՀՀՏ «Հակահամաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ
ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Արաքելյան 14
«Արցախ բանկ» ՓԲԸ «Կենտրոն» մ/6
Հ/Հ 2231100843970
ՀՎՀՀ 90007598
տնօրեն

Օ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԾՁԲ-9-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության անվանում	Տեխնիկական ցուցանիշներ
1.	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում, ախտածին և պայմանական ախտածին մանրէների նկատմամբ հետազոտություն, շճաբանական հետազոտություններ մանրէների նկատմամբ, հեմոկուլտուրայի հետազոտություն:	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի հետազոտության իրականացում, օդակաթիլային վարակների ախտորոշում, ախտածին և պայմանական ախտածին մանրէների նկատմամբ հետազոտության իրականացում, մանրէների նկատմամբ շճաբանական հետազոտություն-ների իրականացում, հեմոկուլտուրայի հետազոտություն:
2.	Արյան մանրէազերծության վերաբերյալ հետազոտություններ	Արյան մանրէաբանական հետազոտությամբ պարզել նրանում առկա հնարավոր մանրէների առկայությունը:
3.	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների վերաբերյալ	Մարդու կղանքի մանրէաբանական հետազոտության միջոցով պարզել աղիքային վարակների առկայությունը օրգանիզմում:
4.	Զգայունության որոշում հակամանրէային պատրաստուկների նկատմամբ	Մարդու կենսանմուշներում հայտնաբերված մանրէների նկատմամբ հակաբիոտիկների զգայունության որոշում:
5..	Դիսբակտերիոզի, իերսինիոզի, էնտերոպաթոգեն աղիքային ցուպիկի ախտորոշիչ հետազոտություններ	Կղանքի մանրէաբանական հետազոտություն դիսբակտերիոզի, իերսինիոզի, էնտերոպաթոգեն աղիքային ցուպիկի նկատմամբ:
6.	Լվացուկների հետազոտություն	Արտաքին միջավայրի մակերեսների և ձեռքերի լվացուկներում մանրէաբանական հետազոտության միջոցով մանրէներով աղտոտվածության որոշում:
7.	Շճաբանական հետազոտություններ հեպատիտ A, B, C, E, կարմրախտի, կարմրուկի, ինֆեկցիոն մոնոնուկլեոզի, համաճարակաբանական խոզուկի նկատմամբ	Իմունոֆերմենտային մեթոդով հետազոտություններ՝ հեպատիտ A, B, C, E, կարմրախտի, կարմրուկի, ինֆեկցիոն մոնոնուկլեոզի, համաճարակաբանական խոզուկի նկատմամբ:
8.	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ	Արյան շճաբանական հետազոտության միջոցով հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ հակամարմինների հայտնաբերում:
9.	Կղանքի հելմինտոլոգիական հետազոտություն	Մարդու կղանքի հետազոտության միջոցով պարզել հելմինտների առկայությունը օրգանիզմում:
10.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց կղանքի հելմինտոլոգիական հետազոտություն	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց կղանքի հետազոտության միջոցով պարզել հելմինտների առկայությունը օրգանիզմում:
11.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց հետազոտություն աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց կղանքի հետազոտության միջոցով պարզել բացիլակրությունը մարդու օրգանիզմում:
12.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտություն	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտության իրականացում:
13.	Խմելու ջրի մանրէաբանական հետազոտություն	Ջրի հետազոտությամբ պարզել միկրոկենսաբանական տեսակետից ջրի որակի համապատասխանությունը սանիտարական կանոններին և նորմերին N2-III-Ա2-1
14.	Խմելու ջրի զգայաբանական հետազոտություն	Ջրի զգայաբանական հետազոտությամբ պարզել քիմիական տարրերի առկայությունը և ջրի որակի համապատասխանությունը սանիտարական կանոններին և նորմերին N2-III-Ա2-1:
15.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ամոնյակ (NH3) և ամոնիում (NH4)	Ջրի հետազոտությամբ պարզել ամոնյակի (NH3) և ամոնիումի (NH4) առկայությունը:

16.	**Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ նիտրիտներ**	**Ջրի հետազոտությամբ պարզել նիտրիտների առկայությունը:**
17.	**Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր կոշտություն**	**Ջրի հետազոտությամբ պարզել ընդհանուր կոշտության մակարդակը:**
18.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ քլորիդներ	Ջրի հետազոտությամբ պարզել քլորիդների առկայությունը:
19.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ սուլֆատներ	Ջրի հետազոտությամբ պարզել սուլֆատների առկայությունը:
20.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ֆտոր	Ջրի հետազոտությամբ պարզել ֆտորի առկայությունը:
21.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ կապար	Ջրի հետազոտությամբ պարզել կապարի առկայությունը:
22.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ երկաթ	Ջրի հետազոտությամբ պարզել երկաթի առկայությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

ԱՀ ԱՆ ՊՀՀՏ «Հակահամաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ
տնօրեն

Օ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Гр-ка Григорян AG 0335413

Գնման ժամանակացույց

Հ/հ	Ծառայության անվանումը	Մատուցման վայր	Չ/Մ	Քանակ	Մեկ միավորի գին /դրամ/	Գնման ժամանակացույց
1.	Կլինիկական և այլ ախտաբանական նյութի հետազոտություն, օդակաթիլային վարակների ախտորոշում, ախտածին և պայմանական ախտածին մանրէների նկատմամբ հետազոտություն, շճաբանական հետազոտություններ մանրէների նկատմամբ, հեմոկուլտուրայի հետազոտություն:	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ	ըստ կարիքների	3,000	Գնումը կկատարվի համապատասխան ստորաբաժանման (զորամասի)պատվերների հիման վրա 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2018թ.
2.	Արյան մանրէազերծության վերաբերյալ հետազոտություններ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		5,000	
3.	Մանրէաբանական հետազոտություն աղիքային վարակների վերաբերյալ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2,000	
4.	Զգայունության որոշում հակամանրէային պատրաստուկների նկատմամբ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2,000	
5..	Դիսբակտերիոզի, իերսինիոզի, էնտերոպաթոգեն աղիքային ցուպիկի ախտորոշիչ հետազոտություններ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		4,000	
6.	Լվացուկների հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		300	
7.	Շճաբանական հետազոտություններ հեպատիտ A, B, C, E, կարմրախտի, կարմրուկի, ինֆեկցիոն մոնոնուկլեոզի, համաճարակաբանական խոզուկի նկատմամբ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		4,400	
8.	Շճաբանական հետազոտություններ հատուկ վտանգավոր վարակների նկատմամբ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		4,400	
9.	Կղանքի հելմինտոլոգիական հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,500	
10.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց կղանքի հելմինտոլոգիական հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,000	
11.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց հետազոտություն աղիքային վարակների բացիլակրության վերաբերյալ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,000	
12.	Օբլիգատ և ռիսկի խմբում ընդգրկված անձանց ստաֆիլակոկակրության վերաբերյալ հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,000	
13.	Խմելու ջրի մանրէաբանական հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,500	
14.	Խմելու ջրի զգայաբանական հետազոտություն	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		100	
15.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ամոնյակ (NH3) և ամոնիում (NH4)	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		800	
16.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ նիտրիտներ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,000	

17.	**Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ընդհանուր կոշտություն**	**ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14**	**հատ**		**800**	
18.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ քլորիդներ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,000	
19.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ սուլֆատներ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,500	
20.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ ֆտոր	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2,000	
21.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ կապար	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		2,500	
22.	Խմելու ջրի քիմիական հետազոտություն՝ երկաթ	ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 14	հատ		1,500	

Սույն պայմանագրի առավելագույն գինը կազմում է՝ 7,790,000 ՀՀ դրամ

Հավելված N 2
N ՄԱԾՁԲ-9-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ծառայության անվանումը	Պայմանագրի առավելագույն ընդհանուր գին/դրամ/	Վճարումը կիրականացվի 2018թ. համապատասխան ամիսներին, ընդ որում՝				
			Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 20.12.18թ
1.	Փորձագիտական ծառայություններ	7,790,000	7,790,000	7,790,000	7,790,000	7,790,000	7,790,000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով: CPV կոդ՝ **50531140/1**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

ԱՀ ԱՆ ՊՀՀՏ «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» ՊՈԱԿ
տնօրեն

Օ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

AC 0335413

Հավելված N 3
N ՄԱԾՁԲ-9-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՄԱԾՁԲ-9-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն